ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն 4
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ **15.04.2025Թ.**

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 23 անդամները, բացակայում են Նորիկ Վարդանյանը, Նարեկ Բաբայանը, Տարոն Եփրեմյանը և Զարուհի Կարապետյանը:
Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյանը, համայնքի ղեկավարի գլխ.խորհրդական Վ.Չիլինգարյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Ա.Խլղաթյանը, համայնքի ղեկավարի օգնականներ Ա.Գասպարյանը, Ա.Ալեքսանյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա.Զաքարյանը, Գ.Աֆյանը, Ս.Բալաբեկյանը:

Նիստը վարում է Չարենցավան համայնքի ղեկավար Հ. Շահգալդյանը:

Նիստը սկսվելուց առաջ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը հայտարարեց, որ նախապես ներկայացված օրակարգից հանվում է 6-րդ կետը՝ «Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքը վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին»/ նախագիծ Ն 41/,քանի որ, ՀՀ Կառավարության կողմից մշակման փուլում է գտնվում համայնքային ենթակայության հողատարածքների օտարման և վարձակալության տրամադրման նոր կարգը, որի ընդունումից հետո միայն կքննարկվի տվյալ նախագիծը:

Լսեցին.

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Ձեզ եմ ներկայացնում Չարենցավան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական թիվ 4 նիստի օրակարգը՝ փոփոխված տարբերակով:

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների դրույթներով. Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Չարենցավան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական թիվ 4 նիստի օրակարգը՝

1) Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 111-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2) Չարենցավան համայնքի 2025 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:
3) Չարենցավան համայնքի 2025 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին:
4) Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողատարածքի մի հատվածի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:
5) Քաղաքացու անվամբ գրանցված 07-007-0106-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
6) Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 110–Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:
7) Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
8) Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական թիվ 5 նիստի գումարման օրը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը՝ օրակարգային հարցերի վերաբերյալ:

Կողմ- 23 դեմ-0 ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 111-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածներով, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 111-Ն որոշման հավելվածի N 1-6 հատվածներում կատարել փոփոխություններ՝

Տողի N	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը	Բյուջեի ավելացում		Ընդամենը
				Վարչ. մաս	Ֆոնդ. մաս	
1	2	3	4	5	6	7
1.	Հողի օտարումից մուտքեր		233422,637	0	30332.1	263754.737

/հազ. դրամ/

Բաժին	Ոստան	Դաս	Ծրագրի անվանումը	Հոդվածի NN	Ընդամենը	Բյուջեի ավելացում		Ընդամենը
						Վարչ. մաս	Ֆոնդ. մաս	
01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ	5122	2240,0	0	280,0	2520,0
09	8	1	Կրթություն այլ դասերին չպատկանող	5113	816764,244	0	30052.1	846816.344

2. Թույլատրել գնումները կատարել Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի համաձայն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 23 դեմ- 0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2 ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 90-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, Զարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. ***ԶԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ 39640,05 ՀԱԶ. ԴՐԱՄ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼ՝***

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրի անվանումը	Հոդվածի NN	Ընդամենը	Բյուջեի ավելացում		Ընդամենը
						Վարչ. մաս	Ֆոնդ. մաս	
04	5	1	Ճանապարհային տրանսպորտ	4251	0	39640,05	0	39640,05
11	1	2	Պահուստային ֆոնդ վարչական բյուջե	4891	291557,034	-39640,05	0	251916,984

2. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ - 23 դեմ- 0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. ԶԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ և ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գ.Աֆյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային

համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ի գիտություն ընդունել Չարենցավան համայնքի 2025 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումները (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 14 դեմ- 0 ձեռնպահ-9

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՄԻ ՀԱՏՎԱԾԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկ.Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման 64-րդ կետի դրույթներով և հինք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 24.03.2025թ. թիվ 107 եզրակացությունը. Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Քաղաքացու սեփականություն հանդիսացող 07-037-0301-0046 կադաստրայն ծածկագրով 1.15471 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողից՝ 0.12 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը համարել փոխված **որպես բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողեր:**
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-23 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՎԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ 07-007-0106-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով, նկատի ունենալով, որ հողերի քարտեզագրման և չափագրման ժամանակ համայնքային սեփականություն հանդիսացող 07-007-0106-0001 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքը սխալմամբ գրանցվել է որպես քաղաքացու սեփականություն, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հողերի քարտեզագրման և չափագրման ժամանակ սխալմամբ որպես քաղաքացու սեփականություն գրանցված 07-007-0106-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.08575 հա մակերեսով հողատարածքը ճանաչել Չարենցավան համայնքի սեփականությունը /կից ներկայացվում է հողամասի հատակագիծը/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 23 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

6. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 110-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.՝ Ա.Զաքարյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հաշվի առնելով Չարենցավան համայնքի Ալափարս գյուղի մսուր մանկապարեզ ՀՈԱԿ-ի տնօրեն Մ.Աթալյանի 2025 թվականի ապրիլի 03-ի թիվ 2124 գրությունը՝ Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին թիվ 110-Ա որոշման հավելված 6-ում ավելացնել 18-րդ տող, «Հաստիքի անվանումը» սյունակում ավելացնել «Դաստիարակ փոխարինող», «Հաստիքային միավոր» սյունակում ավելացնել «1» թիվը, «Պաշտոնային դրույքաչափը» սյունակում ավելացնել «129500» թիվը, «Աշխատավարձի չափը» սյունակում ավելացնել «129500» թիվը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի մայիսի 1-ից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան</u>՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 23 դեմ- 0 ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

8. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԱՅԼ ԴԱՍԵՐԻՆ ՉՊԱՏԿԱՆՈՂ) ՀԱՏՎԱԾԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով Չարենցավան համայնքի Ֆանտան գյուղի 25-րդ տան բնակիչ Մանուշակ Սուքիասյանի 2025 թվականի ապրիլի 03-ի թիվ 21-16 դիմումը ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել Մանուշակ Հարութի Սուքիասյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 23 դեմ- 0 ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

9..ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկ Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով Չարենցավան համայնքի ավագանին՝***որոշում է.***

1. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական թիվ 5 նիստի օր և ժամը սահմանել 2025 թվականի մայիսի 15-ը, ժամը 12:00:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 23 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Չարենցավան համայնքի ավագանու անդամներ՝

Առաքելյան Նորայր

Բաբայան Արայիկ

Բաղդասարյան Սահակ

Գալստյան Արթուր

Գևորգյան Գևորգ

Դավթյան Կարեն

Եփրեմյան Բաբկեն

Թադևոսյան Նունե

Խաչատրյան Արշակ

Հարոյան Լիլիթ

Ղամբարյան Գարիկ

Մալխասյան Նորիկ

Մակինյան Վարդան

Մուքայելյան Վալերի

Շահգալդյան Հակոբ

Պալյան Գարիկ

Պապոյան Դավիթ

Պետրոսյան Ավետիք

Պողոսյան Մնացական

Սահակյան Գառնիկ

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Վարդանյան Սևակ

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ